ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ECAPDEV Դրամաշնորհ No. TF017003

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԳՐԱՍԵՆՅԱԿ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ

# ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԵՎ

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2014թ. հունիսի 1-ից մինչև 2015թ. օգոստոսի 19-ն ընկած
ժամանակաշրջանի վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Օգոստոս 2015թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ........ 3

ՖՈՆԴԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ........ 5

ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ........ 6

ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ........ 8

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ........ 9

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ........ 10

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........ 11

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ ........ 17

"ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ" ՍՊԸ

"SOS-AUDIT" LTD

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 80

Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի
նախապատրաստման դրամաշնորհային ծրագրի
2014թ. հունիսի 1-ից մինչև 2015թ. օգոստոսի 19-ն ընկած ժամանակաշրջանի
հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Ներկայացվում է "Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ" պետական հիմնարկի (ԾԻԳ) ղեկավարությանը

Մեր կողմից իրականացվել է ECAPDEV No.TF017003 Դրամաշնորհի միջոցով ֆինանսավորվող «Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագրի» (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2014թ. հունիսի 1-ից մինչև 2015թ. օգոստոսի 19-ն ընկած ժամանակաշրջանում ֆոնդերի աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, վարկային միջոցների առհանումների հաշվետվությունը, նպատակային հաշվի հաշվետվությունը, 2015թ. օգոստոսի 19-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրությունները:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*
ԾԻԳ-ի ղեկավարությունը պատասխանատու է հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ում ներկայացված հաշվապահական հաշվառման հիմունքի: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

*Աուդիտորի պատասխանատվությունը*
Մենք պատասխանատու ենք Աուդիտի և Հավաստիացման Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է պահպանել վարվեցողության կանոնները և աուդիտը պլանավորել ու անցկացնել՝ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական

Քրոու Հորվաթ Բիզնես Ալյանսի Ասոցիացված Անդամ

ՀՀ, ք. Երևան 0037, Ա.Տիգրանյան 38/55; Հեռ.՝ (+37410) 20 11 51; Ֆաքս՝ (+37410) 20 11 50; www.sosaudit.am; էլ-փոստ՝ info@sosaudit.am

An Associate of the Crowe Horwath Business Alliance

38/55 A.Tigranyan, 0037 Yerevan, RA; Tel.: (+37410) 20 11 51; Fax: (+37410) 20 11 50; www.sosaudit.am; E-mail: info@sosaudit.am

հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից:

Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման և ոչ՝ ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:
Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Կարծիք*

Մեր կարծիքով՝
1. Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2015թ. օգոստոսի 19-ի դրությամբ Ծրագրի ֆինանսական վիճակը, 2014թ. հունիսի 1-ից մինչև 2015թ. օգոստոսի 19-ն ընկած ժամանակաշրջանում ֆոնդերի ստացումները և օգտագործումը՝ համաձայն այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ում ներկայացված հաշվապահական հաշվառման հիմունքի:
2. Ֆոնդերը օգտագործվել են համաձայն Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև 2014թ. մայիսի 13-ին կնքված ECAPDEV No.TF017003 Դրամաշնորհային համաձայնագրում նշված պայմաններին և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին, պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
3. Փոխհատուցման դիմումներում ներկայացված ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Փոխհատուցման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն 2014թ. մայիսի 13-ին կնքված ECAPDEV No.TF017003 Դրամաշնորհային համաձայնագրին:
4. Նպատակային հաշիվը վարվել է համաձայն 2014թ. մայիսի 13-ին կնքված ECAPDEV No.TF017003 Դրամաշնորհային համաձայնագրին և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին:

*Հանգամանքների լուսաբանում*
Առանց ձևափոխելու մեր կարծիքը Ձեր ուշադրությունն ենք հրավիրում հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 6-ին, որը բացահայտում է այն փաստը, որ ծրագիրը ավարտվել է հաշվետվությունների ներկայացման ամսաթվի դրությամբ:

«ՍՕՍ-Աուդիտ» ՍՊԸ
31 օգոստոսի, 2015թ.

Մանվել Ղազարյան
Տնօրեն

Նազիկ Չիբուխչյան
Աուդիտոր

# ՖՈՆԴԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագիր*
*ECAPDEV No.TF017003 Դրամաշնորհի*
*2014թ. հունիսի 1-ից մինչև 2015թ. օգոստոսի 19-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ*

*ԱՄՆ դոլար*

| | Փաստացի | | Նախատեսված | | Շեղում | | ԾԳՓ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Հաշվետու ժամանակաշրջան | Անողական 19.08.2015թ. դրությամբ | Հաշվետու ժամանակաշրջան | Անողական 19.08.2015թ. դրությամբ | Հաշվետու ժամանակաշրջան | Անողական 19.08.2015թ. դրությամբ | |
| **Սկզբնական շրջանառու կապիտալ** | | | | | | | |
| Դրամական միջոցներ | - | - | | | | | |
| Կանխավճարներ | - | - | | | | | |
| Կրեդիտորական պարտքեր | - | - | | | | | |
| **Ընդամենը** | - | - | | | | | |
| **Ֆոնդերի աղբյուրներ** | | | | | | | |
| ECAPDEV No.TF017003 Դրամաշնորհ | 481,057.58 | 481,057.58 | 495,000.00 | 495,000.00 | (13,942.42) | (13,942.42) | 495,000.00 |
| ՀՀ Կառավարություն | 113,981.61 | 113,981.61 | 234,000.00 | 234,000.00 | (120,018.39) | (120,018.39) | 234,000.00 |
| **Ընդամենը** | **595,039.19** | **595,039.19** | **729,000.00** | **729,000.00** | **(133,960.81)** | **(133,960.81)** | **729,000.00** |
| **Փոխարժեքային օգուտ/(վնաս)** | **(14,749.49)** | **(14,749.49)** | | | | | |
| **Ֆոնդերի օգտագործում** | | | | | | | |
| 1. Խորհրդատուների ծառայություններ | 537,989.21 | 537,989.21 | 669,000.00 | 669,000.00 | (131,010.79) | (131,010.79) | 669,000.00 |
| 2. Ապրանքներ | 29,046.94 | 29,046.94 | 28,000.00 | 28,000.00 | 1,046.94 | 1,046.94 | 28,000.00 |
| 3. Ուսուցում | 6,471.92 | 6,471.92 | 32,000.00 | 32,000.00 | (25,528.08) | (25,528.08) | 32,000.00 |
| **Ընդամենը** | **573,508.07** | **573,508.07** | **729,000.00** | **729,000.00** | **(155,491.93)** | **(155,491.93)** | **729,000.00** |
| **Վերջնական շրջանառու կապիտալ** | | | | | | | |
| Դրամական միջոցներ | 6,781.63 | 6,781.63 | | | | | |
| Կանխավճարներ | - | - | | | | | |
| Կրեդիտորական պարտքեր | - | - | | | | | |
| **Ընդամենը** | **6,781.63** | **6,781.63** | | | | | |

**Ֆելիքս Մելիքյան**
**Տնօրեն**

Արամ Զաքարյան
Գլխավոր հաշվապահ

10-16 էջերի ծանոթագրությունները կազմում են այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը

# ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագիր*
*ECAPDEV No.TF017003 Դրամաշնորհ*
*2014թ. հունիսի 1-ից մինչև 2015թ. օգոստոսի 19-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

| Ծրագրի բաղադրիչներ | Փաստացի | | Նախատեսված | | Շեղում | | ԾԳՓ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Հաշվետու ժամանակաշրջան | Անողական 19.08.2015թ. դրությամբ | Հաշվետու ժամանակաշրջան | Անողական 19.08.2015թ. դրությամբ | Հաշվետու ժամանակաշրջան | Անողական 19.08.2015թ. դրությամբ | |
| **Բաղադրիչ 1 - *Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի տեխնիկա-տնտեսական հիմնավորման ուսումնասիրություն*** | **168,481.01** | **168,481.01** | **275,500.00** | **275,500.00** | **(107,018.99)** | **(107,018.99)** | **275,500.00** |
| *1.1: Իրականացնել տեխնիկա-տնտեսական հիմնավորման ուսումնասիրություն՝ Հայաստանի ոռոգման համակարգերի տեխնիկական վիճակը հետազոտելու և տեխնիկական ու շինարարական լուծումներ տալու համար* | 112,935.35 | 112,935.35 | 217,500.00 | 217,500.00 | (104,564.65) | (104,564.65) | 217,500.00 |
| *1.2: Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի սոցիալական ազդեցության գնահատում* | 13,304.38 | 13,304.38 | 15,000.00 | 15,000.00 | (1,695.62) | (1,695.62) | 15,000.00 |
| *1.3: Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի բնապահպանական ազդեցության հաշվետվություն* | 13,194.34 | 13,194.34 | 15,000.00 | 15,000.00 | (1,805.66) | (1,805.66) | 15,000.00 |
| *1.4: Զարգացնել ՋՏ ՄԻԳ-ի կարողությունները՝ անվտանգության դրույթները (safeguards) և տեխնիկական համապատասխանությունն ապահովելու համար* | 29,046.94 | 29,046.94 | 28,000.00 | 28,000.00 | 1,046.94 | 1,046.94 | 28,000.00 |
| **Բաղադրիչ 2 – Ջրօգտագործող ընկերությունների (ՋՕԸ) ինստիտուցիոնալ զարգացում և տեխնիկական կարողությունների ուսումնասիրություն** | **189,631.25** | **189,631.25** | **196,000.00** | **196,000.00** | **(6,368.75)** | **(6,368.75)** | **196,000.00** |
| *2.1: Ջրօգտագործող ընկերությունների ամրապնդման բաղադրիչի զարգացում* | 189,631.25 | 189,631.25 | 180,000.00 | 180,000.00 | 9,631.25 | 9,631.25 | 180,000.00 |
| *2.2: Ինստիտուցիոնալ մասնագետների վերապատրաստում ՋՏԾԻԳ-ի կարողությունների ապահովման նպատակով* | - | - | 16,000.00 | 16,000.00 | (16,000.00) | (16,000.00) | 16,000.00 |
| **Բաղադրիչ 3 - Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի համար ծրագրային փաստաթղթերի պատրաստում** | **215,395.81** | **215,395.81** | **233,500.00** | **233,500.00** | **(18,104.19)** | **(18,104.19)** | **233,500.00** |
| *3.1: Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի փաստաթղթերի մշակում* | 208,923.89 | 208,923.89 | 217,500.00 | 217,500.00 | (8,576.11) | (8,576.11) | 217,500.00 |
| *3.2: Ուղեցույցների մշակում, գնումների, մոնիթորինգի և գնահատման պլանների առաջարկների ներկայացում* | - | - | - | - | - | - | - |
| *3.3: ՋՏ ՄԻԳ-ի մասնագետների ուսուցում՝ գնումների և* | | | | | (9,528.08) | (9,528.08) | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| *մոնիթորինգի ու գնահատման թեմաներով* | 6,471.92 | 6,471.92 | 16,000.00 | 16,000.00 | | | 16,000.00 |
| **Բաղադրիչ 4 - Դրամաշնորհի ֆինանսական աուդիտ** | - | - | **24,000.00** | **24,000.00** | **(24,000.00)** | **(24,000.00)** | **24,000.00** |
| *4.1.: Դրամաշնորհի ֆինանսական աուդիտ* | - | - | 24,000.00 | 24,000.00 | (24,000.00) | (24,000.00) | 24,000.00 |
| **Ընդամենը ծրագրային ծախսեր** | **573,508.07** | **573,508.07** | **729,000.00** | **729,000.00** | **(155,491.93)** | **(155,491.93)** | **729,000.00** |

# ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# (SOE և SUMMARY SHEET)

*Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագիր*
*ECAPDEV No.TF017003 Դրամաշնորհի*
*2014թ. հունիսի 1-ից մինչև 2015թ. օգոստոսի 19-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

| Դիմումի համար | Հաստատման ամսաթիվ | (1) Խորհրդատուների ծառայություններ | (2) Ապրանքներ | (3) Ուսուցում | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 2 | 29.12.2014 | 10,291.99 | 24,039.52 | - | 34,331.51 |
| 3 | 29.01.2015 | 98,242.06 | - | - | 98,242.06 |
| 4 | 02.03.2015 | 69,633.25 | - | - | 69,633.25 |
| 5 | 21.05.2015 | 30,765.72 | - | - | 30,765.72 |
| 6 | 21.05.2015 | 61,113.12 | - | 6,471.92 | 67,585.04 |
| 7 | 01.07.2015 | 94,442.25 | - | - | 94,442.25 |
| 8 | 05.08.2015 | 80,227.71 | - | - | 80,227.71 |
| **Ընդամենը** | | **444,716.10** | **24,039.52** | **6,471.92** | **475,227.54** |

## ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագիր ECAPDEV No. TF017003 Դրամաշնորհի 2014թ. հունիսի 1-ից մինչև 2015թ. օգոստոսի 19-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ*

| Նպատակային հաշիվ | ECAPDEV Դրամաշնորհի No. TF017003 |
|---|---|
| Արժույթ | ԱՄՆ դոլար |
| Հաշվարկային հաշիվ | 900000900176 |
| Բանկ | Կենտրոնական գանձապետարան |
| Հասցե | Տիգրան Մեծ 4, 1-ին հարկ, Երևան, Հայաստանի Հանրապետություն 0010 |

| | ԱՄՆ դոլար |
|---|---|
| 1. Սկզբնական մնացորդը 01.06.2014թ. | - |
| *Ավելացում* | |
| 2. Սկզբնական անհամապատասխանություն | - |
| 3. ՎԶՄԲ ֆոնդի կանխավճար/համալրում | 481,057.58 |
| *Նվազեցում* | |
| 4.Նպատակային հաշվից մարում ՎԶՄԲ-ին | - |
| **5. Նպատակային հաշվին համալրված գումարի ներկա մնացորդը** | **481,057.58** |
| 6. Նպատակային հաշվի վերջնական մնացորդը 19.08.2015թ. դրությամբ | 5,830.04 |
| *Ավելացում* | |
| 7. Վճարված ընդունելի ծախսումներ | 475,227.54 |
| 8. Ծառայությունների վճարներ (եթե դեբետագրվել են նպատակային հաշվին) | - |
| *Նվազեցում* | |
| 9. Ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են նպատակային հաշվին) | - |
| **10. Ընդամենը հաշվարկված կանխավճար/համալրում** | **481,057.58** |
| 11. Տարբերություն (5)-(10) | - |

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագիր ECAPDEV No. TF017003 Դրամաշնորհ*
*2014թ. հունիսի 1-ից մինչև 2015թ. օգոստոսի 19-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ*

| | ծնթ. | 19.08.2015<br>ԱՄՆ դոլար |
|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| **Դրամական միջոցներ** | | |
| Նպատակային հաշիվ ECAPDEV Դրամաշնորհի No. TF017003 (ԱՄՆ դոլար) | | 5,830.04 |
| Տեղական արժույթի հաշիվ - ՀՀ Կառավարություն (ՀՀ դրամ) | | 951.59 |
| **Ընդամենը դրամական միջոցներ** | | **6,781.63** |
| Ծրագրի անողական ծախսեր | 3 | 573,508.07 |
| Արտարժութային վնաս | | 14,749.49 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | | **595,039.19** |
| **ՖՈՆԴԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | |
| **Ֆոնդեր** | | |
| ECAPDEV Դրամաշնորհի No. TF017003 | 4.1 | 481,057.58 |
| ՀՀ Կառավարություն | 4.2 | 113,981.61 |
| **Ընդամենը ֆոնդեր** | | **595,039.19** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **595,039.19** |

## 1. Ընդհանուր տեղեկություններ

### *1.1. Ծրագրի ֆինանսավորում*

2014թ. մայիսի 13-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) միջև կնքվել է ECAPDEV No.TF017003 դրամաշնորհային համաձայնագիր, համաձայն որի ՎԶՄԲ-ն հանդես գալով որպես Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Կարողությունների զարգացման բազմադոնոր հավատարմագրային հիմնադրամի (ECAPDEV) կառավարիչ՝ Ռուսաստանի Դաշնության Կառավարության տրամադրած նախնական միջոցների հաշվին տրամադրել է 495,000 ԱՄՆ դոլար գումարի դրամաշնորհ:

Դրամաշնորհը տրամադրվել է Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագիր իրականացման նպատակով (Ծրագիր):

Ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2015թ. հունիսի 22-ը: Փոխհատուցման դիմումների ներկայացման արտոնյալ ժամանակաշրջան է սահմանված է Ծրագրի ավարտից հետո չորս ամիս:

### *1.2. Ծրագրի նպատակը*

Ծրագրի նպատակը Եվրասիական Զարգացման Բանկի Հակաճգնաժամային հիմնադրամի կողմից ֆինանսավորվելիք Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի իրականացման պատրաստակամության բարելավումն է և Հայաստանի Տարածքային կառավարման նախարարության Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակի (ԾԻԳ) կարողությունների ամրապնդումը՝ գնումների, մոնիթորինգի և գնահատման գծով ծրագրերի պատրաստման և իրականացման համար:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

1. Իրագործելիության ուսումնասիրություն և բնապահպանական և սոցիալական ղեկավարման շրջանակի պատրաստում Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի համար,
2. Ջրօգտագործող ընկերությունների (ՋՕԸ) ինստիտուցիոնալ և տեխնիկական հնարավորությունների զարգացում,
3. Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի համար լրացուցիչ ծրագրային փաստաթղթերի պատրաստում,
4. Դրամաշնորհի ֆինանսական աուդիտ:

### *1.3. Ծրագրի բյուջե և ֆինանսավորում*

Ծրագիրը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից.

- ECAPDEV Դրամաշնորհ No.TF017003՝ ծախսերի ֆինանսավորում 100%, բացառությամբ հարկերի,
- Հայաստանի Հանրապետության Կառավարություն՝ հարկերի ֆինանսավորում:

| Կատեգորիա | ECAPDEV Դրամաշնորհ No.TF017003 | ՀՀ Կառավարություն | Ընդամենը |
|---|---|---|---|
| | *ԱՄՆ դոլար* | *ԱՄՆ դոլար համարժեք* | *ԱՄՆ դոլար* |
| 1. Խորհրդատուների ծառայություններ | 450,000.00 | 219,000.00 | **669,000.00** |
| 2. Ապրանքներ | 23,500.00 | 4,500.00 | **28,000.00** |
| 3. Ուսուցում | 21,500.00 | 10,500.00 | **32,000.00** |
| **Ընդամենը** | **495,000.00** | **234,000.00** | **729,000.00** |

### *1.4. Ծրագրի իրականացում*

Ծրագիրը իրականացվում է «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի (ՋՏԾԻԳ) կողմից:
ՋՏԾԻԳ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0033, Բաղրամյան փ. 75/44:

## 2. Հաշվապահական հաշվառում

### *2.1 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում*

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ըստ հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի և ներկայացվել են Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի (մարտ 2010)՝ «RM 3- Ֆինանսական Հաշվետվողականություն և Աուդիտ»-ի համաձայն:

Համաձայն հաշվապահական հաշվառման հաշվեգրման մեթոդի՝ ծախսերը ճանաչվում են գործառնությունների կատարման պահին և ոչ միայն դրամական միջոցների կամ դրանց համարժեքների ստացման կամ վճարման պահին: Գործառնությունները հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում գրանցվում ու ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները ներառում են.

- ֆոնդերի աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը,
- ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը,
- վարկային միջոցների առհանումների հաշվետվությունը,
- նպատակային հաշվի հաշվետվությունը,
- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը,
- հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է:

*2.2 Գործարքներ արտարժույթով*

Ծրագրի հաշիվները վարվում են և գործարքները կատարվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով: ՀՀ դրամով արտահայտված գործարքները փոխարկվում են ԱՄՆ դոլարի հետևյալ կերպ.

- ՀՀ դրամով արտահայտված ՀՀ Կառավարության ներդրումները փոխարկվում են ԱՄՆ դոլարով յուրաքանչյուր փոխանցման օրվա ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով,
- ՀՀ դրամով արտահայտված ծախսերի վճարումները կապալառուներին և այլ մատակարարներին փոխարկվում են ԱՄՆ դոլարով վճարման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով,
- դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են հաշվեփակման օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքով,
- արտարժույթի փոխանակումից առաջացող օգուտները և վնասները ճանաչվում և ներկայացվում են ֆինանսական հաշվետվություններում զուտ գումարով որպես Փոխարժեքային տարբերություն:

2014թ. հունիսի 1-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար = 413.28 դրամ:

2015թ. օգոստոսի 19-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար = 477.62 դրամ:

*2.3 Հարկեր*

Ծրագրի գծով հարկերը և պարտադիր վճարները հաշվարկվում և վճարվում են համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության:

4. Ֆինանսավորում

4.1 ECAPDEV Դրամաշնորհ No.TF017003

| | Հաշվետու ժամանակաշրջան ԱՄՆ դոլար | Առ 19.08.2015թ. կուտակային ԱՄՆ դոլար |
|---|---|---|
| Կանխավճար | 5,830.04 | 5,830.04 |
| SOE | 48,825.97 | 48,825.97 |
| Summary Report | 426,401.57 | 426,401.57 |
| | 481,057.58 | 481,057.58 |
| Ընդամենը բյուջե | | 495,000.00 |
| Առ 19.08.2015թ. տրամադրված ֆինանսավորում % | | 97% |

4.2.ՀՀ Կառավարության ֆինանսավորում

| | Հաշվետու ժամանակաշրջան ԱՄՆ դոլար | Առ 19.08.2015թ. կուտակային ԱՄՆ դոլար |
|---|---|---|
| Ֆինանսավորում | 113,981.61 | 113,981.61 |
| | 113,981.61 | 113,981.61 |
| Ընդամենը բյուջե | | 234,000.00 |
| Առ 19.08.2015թ. տրամադրված ֆինանսավորում % | | 49% |

5. Բյուջեի կատարում

| Ծախսային հոդված | Անռդական ծախսումներ 19.08.2015թ. դրությամբ ԱՄՆ դոլար | Ընդամենը բյուջե ԱՄՆ դոլար | Կատարում % |
|---|---|---|---|
| 1. Խորհրդատուների ծառայություններ | 537,989.21 | 669,000.00 | 80% |
| 2. Ապրանքներ | 29,046.94 | 28,000.00 | 104% |
| 3. Ուսուցում | 6,471.92 | 32,000.00 | 20% |
| **Ընդամենը** | **573,508.07** | **729,000.00** | **79%** |

6. Ծրագրի ավարտ

Ծրագիրն ավարտվել է 2015թ. հունիսի 22-ին (Ավարտման ամսաթիվ), և գործարքները ավարտվել են 2015թ. օգոստոսի 19-ին (Հաշվետվության ամսաթիվ):

Ա) Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ.

ա. Ծրագրի ավարտման ամսաթվից հետո այլ ծախսեր չեն կատարվել, արտոնյալ ժամանակահատվածում վճարումները վերաբերում են մինչև Ավարտման ամսաթիվը կատարված ծախսերին

բ. Ծրագրի ավարտման ամսաթվից հետո ECAPDEV No.TF017003 դրամաշնորհի գծով առհանումներ չեն կատարվել,

գ. Հաշվետու ամսաթվից հետո չկան ՀԲ-ին ներկայացված Ծրագրին վերաբերվող ծախսեր,

դ. Հաշվետու ամսաթվի դրությամբ չկան Ծրագրին առնչվող կանխավճարների մնացորդներ կամ չմարված կրեդիտորական պարտավորություններ,

ե. Հաշվետու ամսաթվին դրամական միջոցների մնացորդները իրենցից ներկայացնում են:

- Նպատակային հաշվի 5,830,04 ԱՄՆ դոլար մնացորդը, որի մնացած մասը վերջնական աուդիտի ծառայության համար վճարելուց հետո, կփոխանցվի ՀԲ-ին,
- Տեղական արժութային հաշվի 951.59 ԱՄՆ դոլար մնացորդը, որը նախատեսված է վերջնական աուդիտի ծառայության հարկերը վճարելու համար,

զ. Մենք տեղյակ չենք Ծրագրի դեմ որևէ սպասվող կամ փաստացի դատական հայցի մասին:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

*Առողջական համակարգերի արդիականացման ծրագրի նախապատրաստման դրամաշնորհային ծրագիր*
*ECAPDEV No.TF017003 Դրամաշնորհի*
*2014թ. հունիսի 1-ից մինչև 2015թ. օգոստոսի 19-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

| Կատեգորիա | Դիմում | ԾԻԳ | ՀԲ | Տարբերություն |
|---|---|---|---|---|
| Կանխավճար (մարում) | 1 | 100,000.00 | 100,000.00 | |
| | 7 | - | (13,942.25) | |
| | 8 | - | (80,227.71) | |
| | | **100,000.00** | **5,830.04** | |
| 1. Խորհրդատուների ծառայություններ | 2 | 10,291.99 | 10,291.99 | - |
| | 3 | 98,242.06 | 98,242.06 | - |
| | 4 | 69,633.25 | 69,633.25 | - |
| | 5 | 30,765.72 | 30,765.72 | - |
| | 6 | 61,113.12 | 61,113.12 | - |
| | 7 | 94,442.25 | 94,442.25 | - |
| | 8 | 80,227.71 | 80,227.71 | - |
| | | **444,716.10** | **444,716.10** | |
| 2. Ապրանքներ | 2 | 24,039.52 | 24,039.52 | - |
| | | **24,039.52** | **24,039.52** | |
| 3. Ուսուցում | 6 | 6,471.92 | 6,471.92 | - |
| | | **6,471.92** | **6,471.92** | |
| **Ընդամենը** | | **575,227.54** | **481,057.58** | |